ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ARMENIA TREEPROJECT
«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԷՅ ԹԻ ՓԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) և «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ),միասին՝ Կողմեր,

հիմք ընդունելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի (այսուհետ՝ «Էյ Թի Փի») և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև 2017 թվականին կնքված փոխըմբռնման հուշագիրը,

ցանկանալով համագործակցել Հայաստանում արտադպրոցական բնապահպանական կրթության իրականացմանն աջակցելու նպատակով,

կնքեցին սույն Փոխըմբռնման Հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

### Հոդված 1. Հուշագրի նպատակը

1. Սույն Հուշագիրը սահմանում է Կողմերի գործողությունների շրջանակը, ինչպես նաև պարտավորություններն ու համագործակցային պայմանավորվածությունները՝ արտադպրոցական բնապահպանական կրթության իրականացման ոլորտում:
2. Սույն Հուշագրի նպատակն է նպաստել բնապահպանական կրթության կարևորմանն ու առավել տարածմանը Հայաստանի Հանրապետության կրթական տիրույթում՝ հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական) և մասնագիտական կրթության համակարգերում: Սույն Հուշագրով Կողմերը պատրաստակամություն են հայտնում գործել համակարգված և փոխհամաձայնեցված, մեկտեղել ջանքերը սույն Հուշագրի նպատակներն իրականացնելու համար:

### Հոդված 2. Համագործակցության պայմանները

3. Սույն Հուշագրի արդյունավետությունն ապահովելու համար Կողմերը պայմանավորվում են հետևյալի շուրջ՝

1) պարբերական հանդիպումների և համատեղ միջոցառումների կազմակերպմամբ համապատասխան տեղեկատվության փոխանակում,
2) արտադպրոցական բնապահպանական կրթության ուղղություններով համատեղ միջոցառումների իրականացում,
3) բնապահպանական կրթության ոլորտի խնդիրների լուծման գործընթացում կողմերի փորձագիտական և մասնագիտական ներուժի օգտագործում:

4. Կողմերը համաձայնեցին իրականացնել համագործակցության շրջանակներում նախատեսված աշխատանքները «էկո ակումբերում», որոնց ցանկը սահմանված է սույն Հուշագրի հավելվածում:

**Հոդված 3. Կողմերի հիմնական պարտավորությունները**

4. **Նախարարության պարտավորություններն են՝**

1) Սույն Հուշագրով ամրագրված դրույթներն իրագործելու համար ապահովել Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների և մանկավարժների մասնակցությունը պլանավորված միջոցառումներին և ծրագրերին:
2) Համապատասխան պետական կառույցների, միջազգային գործընկեր կազմակերպությունների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ մասնակցել բնապահպանական արտադպրոցական կրթության խթանման համատեղ աշխատանքներին:
3) Իր լիազորությունների շրջանակներում նպաստել արտադպրոցական բնապահպանական կրթության տարածմանն ու առաջընթացին միտված ծրագրերին և գործողություններին՝ տրամադրելով մասնագիտական խորհրդատվություն և համապատասխան տեղեկություն, ինչպես նաև նպաստել նշված ոլորտում խնդիրների լուծման հանրայնացմանը և լուսաբանմանը:

5. **Հիմնադրամի պարտավորություններն են.**

1) Նախարարության, պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ իրականացնել համակարգված աշխատանքներ, որոնք ուղղված են արտադպրոցական բնապահպանական կրթության կարևորմանն ու առավել տարածմանը Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում:

2) Իր մասնագիտական ներուժն ու մյուս կարողությունները ներդնել արտադպրոցական բնապահպանական կրթության զարգացմանը ներքոհիշյալ ուղղություններով՝

ա. աշխատանքներ իրականացնել բնապահպանական կրթության բովանդակության և համապատասխան մեթոդական աջակցություն ապահովելու ուղղությամբ՝ հանրակրթության (նախադպրոցական կրթության, տարրական, միջին և ավագ

դպրոցների մակարդակներում), ինչպես նաև մասնագիտական կրթության համակարգում;

բ. աշխատանքներ իրականացնել հանրակրթության ոլորտում էկոլոգիական նախագծային ուսուցման և դաստիարակության միջոցով տարիքային բոլոր խմբերին կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և հմտություններով զինելու ուղղությամբ;

գ. Նախարարության և այլ շահագրգիռ կառույցների օժանդակությամբ նպաստել ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնմանը՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ «Միտք սերմանի՛ր, ծառ տնկի՛ր» ուսումնական ձեռնարկի և այլ ուսումնական նյութերի հիման վրա;

դ. նպաստել Հիմնադրամ և Նախարարություն կառուցողական երկխոսության և արդյունավետ համագործակցության խորացմանը:

**Հոդված 4. Ընդհանուր դրույթներ**

6. Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական կամ ֆինանսական պարտավորություններ:

7. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը: Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրի կատարման ժամկետը կարող է երկարացվել:

8. Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպված առանձին արձանագրություններով, որոնք կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

9. Սույն Հուշագրով նախատեսված աշխատանքները կիրականացվեն Հավելված 1-ում նշված էկո ակումբներում:

10. Կողմերը կարող են պետական և մասնավոր անձանց հետ կնքել վերոհիշյալ նախաձեռնությունները իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանագրեր և փաստաթղթեր:

11. Կողմերն իրավասու չեն որևէ ձևով կամ եղանակով օգտագործել մեկ այլ Կողմի անվանումը, պաշտոնական խորհրդանիշերը, կնիքները, կրթական նյութերը և այլ փաստաթղթեր, ինչպես նաև այլ Կողմերի անվանումների հապավումներն առանց համապատասխան Կողմի նախնական թույլատվության:

12. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին 30 (երեսուն) օր առաջ: Սույն Հուշագրի դադարեցումը չի

ազդում Հուշագրի շրջանակներում որևէ ընթացիկ ծրագրի կամ նախագծի իրականացման վրա, եթե Կողմերը որևէ այլ որոշում չկայացնեն:

Կատարված է 2021 թ. հոկտեմբերի 6-ին Երևան քաղաքում, երկու հավասարազոր հայերեն բնօրինակով:

| | |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝** | **«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից՝** |
| **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ** | **ՋԻՆՄԱՐԻ ՓԱՓԵԼՅԱՆ** |
| **Նախարարի տեղակալ** | **Գործադիր տնօրեն** |

**Էկո ակումբների ցանկ**

- Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց
- Վեդիի Գ. Մարգարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց
- Ռինդի միջնակարգ դպրոց
- Պարույր Սևակի միջնակարգ դպրոց
- Չիվայի միջնակարգ դպրոց
- Թեղենիքի Վ. Ջինիշյանի անվան միջնակարգ դպրոց
- «Փոքրիկ Իշխան» կրթահամալիր
- Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց
- Երևանի Գրիգոր Զոհրապի անվան թիվ 97 ավագ դպրոց
- Երևանի Վահան Տերյանի անվան թիվ 60 հիմնական դպրոց
- Երևանի թիվ 50 հիմնական դպրոց
- Գեղարքունիքի միջնակարգ դպրոց

- Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց
- Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց
- Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց
- Մարգահովիտի Հովհաննես Թումանյանի անվան միջնակարգ դպրոց
- Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոց
- Ստեփանավանի թիվ 2 հիմնական դպրոց
- Սպիտակի թիվ 2 հիմնական դպրոց
- Թումանյանի միջնակարգ դպրոց
- Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոց
- Իջևանի Մկրտիչ Մարտիրոսյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց
- Այրումի միջնակարգ դպրոց
- Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց
- Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոց
- Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց
- Արթիկի թիվ 6 հիմնական դպրոց

- Կարինի միջնակարգ դպրոց
- Սասունիկի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց
- Ջրահովիտի Վ.Աբրահամյանի անվ. միջնակարգ դպրոց
- Երևանի թիվ 140 հիմնական դպրոց
- Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոց
- Վանաձորի Պ. Սևակի անվան թիվ 30 հիմնական դպրոց